ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ



Ալավերդյան Լուսինե Վահրամի

Ծնվել է 07.07.1983թ. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում: 2004թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2006թ. նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ քրեաիրավական մասնագիտացմամբ: 2012թ. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի Իրավագիտություն-001 մասնագիտական խորհրդի որոշմամբ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2017թ. ստացել է դոցենտի կոչում: 26.04.2013թ. շնորհվել է արդարադատության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան: 2006-2007թթ. աշխատել է ՀՀ սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական ծառայության անհատական դիմումների վերլուծության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ: 2007-2013թթ. աշխատել է ՀՀ սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական ծառայության անհատական դիմումների վերլուծության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: 2013թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական ծառայության /վարչության/ անհատական դիմումների վերլուծության բաժնում՝ որպես բաժնի վարիչ: 03.09.2012թ.-ից առ այսօր աշխատում է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամում՝ որպես դասախոս Իրավունքի ամբիոնում: 2011թ.-ից առ այսօր աշխատում է Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ որպես դասախոս: 2017թ.-ից առ այսօր վարում է վերապատրաստման դասընթացներ ՀՀ փաստաբանների պալատում «Անհատական սահմանադրական գանգատի ընդունելիության չափանիշները» թեմայով: Հեղինակ է մի շարք աշխատությունների: Ամուսնացած է, ունի մեկ զավակ:



Հովհաննիսյան Լուսինե Ռազմիկի

Ծնվել է 17.08.1972թ.: 1993թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 2002թ. ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ունի դոցենտի գիտական կոչում: 1994-1997թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Գավառի անձնագրային բաժնի պետի պաշտոնում: 2000-2003թթ. աշխատել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության իրավաբանական վարչությունում՝ որպես գլխավոր մասնագետ: 2003-2006թթ. աշխատել է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովում՝ որպես գլխավոր մասնագետ: 2007թ. աշխատել է ՀՀ դատախազության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազությունում՝ որպես դատախազ: 2007թ. դասավանդել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնում: 01.09.2011թ.-ից մինչ օրս դասախոսում է Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնում, հանդիսանում է նշված ամբիոնի վարիչ: Հեղինակ /համահեղինակ/ է շուրջ 15 տպագրված գիտական հոդվածների, 1 մենագրության և 1 ուսումնա-մեթոդական ձեռնարկի: Գերազանց տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուների, անգլերեն լեզվին՝ լավ: Տիրապետում է նաև MS Office (Word, Excel, Access, Power Point, Outlook); Windows 98-2000, Internet Explorer համակարգչային ծրագրերին: Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Սիմոնյան Անդրանիկ Արամի

Ծնվել է 10.10.1989թ. ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում: 1995-2005թթ. սովորել է Արմավիր քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 2005-2009թթ. սովորել է ՀՀ ոստիկանության ակադեմիայում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան: 2010-2013թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2013թ. սովորել է ՀՀ դատախազության դպրոցում: 2017թ.-ից հանդիսանում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ: 2009-2012թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության իրավական փորձաքննությունների բաժնում նախ՝ որպես տեսուչ, ապա՝ ավագ տեսուչ: 2012-2013թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 1-ին /կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման/ վարչության 3-րդ /ֆինանսավարկային համակարգում կատարվող հանցագործությունների, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի/ բաժնի օպերլիազոր: 2014-2018թթ. աշխատել է որպես Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ: Ամուսնացած չէ:



Դանիելյան Անի Կարենի

Ծնվել է 15.01.1991թ. Երևան քաղաքում: 2012թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2014թ.՝ մագիստրատուրան: 2018թ. ավարտել է նույն համալսարանի ասպիրանտուրան, թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունեցել 29.04.2019թ.: 07.07.2009թ. մինչև 30.07.2009թ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ում՝ որպես Կենտրոնական մարմնի ցրիչ: 03.08.2009-18.03.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմում՝ որպես գրասենյակի գործավարի ժամանակավոր պաշտոնակատար: 18.03.2011-31.01.2012թթ. աշխատել է «Տնտեսական անվտանգության ծառայության «ԱՎՏ-Ջ»» ՍՊԸ-ում՝ որպես գլխավոր տնօրենի խորհրդականի օգնական: 01.03.2012թ. մինչև 15.08.2012թ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի գործավար, իսկ մինչև 14.03.2014թ.-ը՝ որպես դատավորի օգնական: 14.03.2014-01.09.2016թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես քրեական պալատի նախագահի ավագ օգնական: Այնուհետև, մինչև 01.06.2018թ. զբաղեցրել է ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության վարչության պետի պաշտոնը՝ ստանալով առաջին դասի խորհրդականի դասային աստիճան: 01.06.2018թ.-ից առ այսօր աշխատում է «Դիջիթեյն» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 2016թ.-ի սեպտեմբերից առ այսօր դասավանդում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում /քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն/: 2017թ.-ից դասավանդում է ՀՀ արդարադատության ակադեմիայում՝ դատավորների, իսկ 2018թ.-ից նաև դատախազների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում: Հեղինակ /համահեղինակ/ է 17 գիտական հոդվածների և մեկ մենագրության: Ազատ տիրապետում է անգլերենին և ռուսերենին, ինչպես նաև MS Office, Internet համակարգչային ծրագրերին: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



Բախշիյան Բորիս Հրանտի

Ծնվել է 11.08.1985թ. Ադրբեջանի ԽՍՀ Մինգեչաուր քաղաքում: 2002-2007թթ. սովորել է ՀՀ ոստիկանության ակադեմիայում՝ ստանալով իրավաբան-իրավագետի մասնագիտական որոկավորում: 04.06.2007-25.02.2013թթ. աշխատել է ԼՂՀ ոստիկանության քննչական վարչությունում նախ քննիչի, ապա ավագ քննիչի պաշտոններում: 25.06.2013-13.11.2013թթ. զբաղեցրել է Թիվ 3 կայազորի զինվորական դատախազության դատախազի պաշտոնը, իսկ 13.11.2013-17.03.2015թթ.՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազի պաշտոնը: 17.03.2015թ.-ից հանդիսանում է Թիվ 3 կայազորի զինվորական դատախազի տեղակալը: Ամուսնացած է, ունի երկու զավակ:



Երեմյան Հայկ Պավլենի

Ծնվել է 27.03.1983թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղում: 1999թ. ավարտել է Գեղարքունիքի մարզի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը: 2003թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2005թ.՝ մագիստրատուրան: 2013-2014թթ. ուսանել է Գերմանիայի Քիլ քաղաքի Քրիստիան Ալբրեխտի անվան համալսարանում, Վալտեր Շյուքինգի անվան միջազգային իրավունքի ինստիտուտում՝ ստանալով միջազգային իրավունքի մագիստրոսի /LL.M. Int./ որակավորման աստիճան: 28.06.2005-04.10.2010թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում՝ որպես բանակային կորպուսի ավագ սպա-իրավաբան: 29.11.2010-14.06.2011թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ: 14.06.2011-16.10.2012թթ. աշխատել է նույն վարչությունում՝ որպես մասնագետ, իսկ 16.10.2012-09.07.2013թթ. և 17.11.2014-12.01.2015թթ. նույն վարչությունում՝ որպես ավագ մասնագետ: 2015թ. ավարտել է ՀՀ արդարադատության ակադեմիայի դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացը: 26.05.2016-08.05.2018թթ. աշխատել է Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազի, իսկ 08.05.2018թ.-ից առ այսօր՝ ավագ դատախազի պաշտոններում: 2009թ. ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» մեդալով: ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2017թ. պարգևատրվել է «Իրավակարգի ամրապնդման» մեդալով, 2018թ.՝ «ՀՀ դատախազության 100-ամյակ» հոբելյանական մեդալով: Տիրապետում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն լեզուներին, Office, Outlook, Express համակարգչային ծրագրերին: 5 գիտական հոդվածի հեղինակ է: Ամուսնացած չէ:



Ջիվանյան Վահե Ալեքսանդրի

Ծնվել է 03.08.1987թ. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում: 1994-2004թթ. սովորել է Կարմիր Շուկա գյուղի միջնակարգ դպրոցում: 2004-2009թթ. ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետը: 12.08.2009-01.03.2014թթ. աշխատել է ԱՀ ոստիկանության քննչական վարչությունում՝ Ստեփանակերտ քաղաքի քննչական բաժնի քննիչի, նույն վարչության հատկապես կարևոր գործերով քննության բաժնի քննիչի, ավագ քննիչի և Մարտունու շրջանի քննչական խմբի ավագ քննիչի պաշտոններում, ունի ոստիկանության կապիտանի կոչում: 05.03.2014-29.12.2015թթ. աշխատել է ՀՀ զինվորական դատախազության 2-րդ կայազորի զինվորական դատախազության դատախազի, այնուհետև ավագ դատախազի պաշտոններում: 29.12.2015-19.06.2018թթ. զբաղեցրել է ԱՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի դատախազի պաշտոնը, իսկ 19.06.2018թ.-ից առ այսօր զբաղեցնում է Մարտակերտի շրջանի դատախազի տեղակալի պաշտոնը, ունի արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան: 15.01.2010թ. մինչև 14.02.2010թ. վերապատրաստման դասընթացներ է անցել Եգիպտոսի Արաբական Հանրապետության ոստիկանության ակադեմիայում: 23.12.2013-19.07.2016թթ. ընդգրկված է եղել ԼՂՀ դատավորների թեկնածուների ցուցակում: Ռուսերենին տիրապետում է ազատ, անգլերենով կարդում և թարգմանում է բառարանի օգնությամբ: Ամուսնացած է, ունի երկու դուստր: